2022-2023 ուստարի

ՀՀ Լոռու մարզի Ստեփանավան քաղաքի N2 հիմնական դպրոցի դասվարի աշխատանքային հաշվետվություն

Դասվար՝ Հ. Նազարյան

Կրթադաստիարակչական աշխատանքների հիմնական ուղղությունները

1.Կրթական

- Առաջնորդվելով ԿԳՍՄՆ նախարարության հաստատած չափորոշչային պահանջներով, ստեղծել եմ տարեկան թեմատիկ պլաններ բոլոր առարկաներից և ներկայացրել հաստատման:
- Տարվա կտրվածքով նախատեսված բոլոր միջոցառումներն ու տեսադասերը, բաց դասը իրականացվել է:
- Թեմատիկ պլանով նախատեսված թեմաները լիարժեք ուսուցանվել են: Տոնական և հիշատակի օրերի բացթողումները խտացվել և ուսուցանվել են կիսամյակների ընթացքում:
- Տրվել են նախատեսված բոլոր թեմատիկ աշխատանքները մայրենիից, մաթեմատիկայից /թվով տասական/, << Ես և շրջակա աշխարհը>> առարկայից՝ 3 թեմատիկ աշխատանք: Գործնական աշխատանքները ևս կատարվել են ըստ նախատեսվածի, որոնք հիմնականում նպաստել են առօրյայում և կյանքում գիտելիքները ճիշտ ու տեղին կիրառելուն:
- 2022-2023 ուստարում մասնակցել եմ հերթական ատեստավորման դասընթացին և ստացել համապատասխան հավաստագիր:
- Ուսարվա ընթացքում փորձի փոխանակման նպատակով կատարվել են փոխադարձ դասալսումներ, վերլուծվել դրանք:
- Ուստարվա ընթացքում լրացուցիչ աշխատանքներ են տարվել ԿԱՊԿՈՒ աշակերտ Արտակ Աբրահամյանի և մյուս ետ մնացող աշակերտների հետ: Լրացուցիչ աշխատանքներ են տրվել լավ սովորող աշակերտներին:
- Բոլոր առարկաներից ծրագրերը կատարված են: Տրվել է ամառային հանձնարարություն:

2. Դաստիարակչական

- Ուսումնառությունը հետաքրքիր և արդյունավետ դարձնելու համար ստեղծել եմ բարենպաստ պայմաններ,միջավայր, համապատասխան կահավորում:
- Ամրացրել եմ փոխհամագործակցությունը և փոխօգնությունը:
- Աշակերտների մեջ խորացրել եմ սերը ուսման, հայրենիքի, դպրոցի նկատմամբ:Սերմանել եմ աշխատասիրություն,պարտաճանաչություն և պատասխանատվության զգացում ,բարեխիղճ և հոգատար վերաբերմունք դպրոցի գույքի,դասագրքերի նկատմամբ:
- Սովորեցրել եմ գնահատել սեփական արարքները, նկատել իրենց և ընկերների թերությունները, ժամանակին շտկել դրանք:
- Դաստիարակել եմ հարգանք մեծերի նկատմամբ, ուշադրություն՝ փոքրերի նկատմամբ:
- Կարևորել եմ անձնական հիգիենան և մաքրասիրությունը:
- Զևավորել եմ բարոյական արժեքներ, որոնք պետք է դառնան աշակերտների հետագա ուսումնառության և վարքի հիմքը: Ծանոթացրել եմ հայ և արտասահմանյան հանճարեղ մարդկանց կյանքին, նրանց գործունեությանը, կատարած սխրանքներին:
- Զևավորել հայրենասեր, ազգանվեր, կրթված, ընկերասեր անհատներ՝ պատրաստ հաղթահարելու բոլոր խոչընդոտները և առաջ շարժվելու ձգտումը: